Աջակցություն Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրին հեղինակային կրթական ծրագրերի իրականացման համար

Ստեղծողի մոբիլ դպրոց
Ստեղծագործ անհատի կրթական պատվեր, անհատի օժտվածության զարգացման հանրակրթական բաց համակարգ: Հեղինակային կրթական ծրագիրը՝ ուսումնական օրացույցով, ուսումնական նախագծերով, անհատական թվային միջոցներով

Հունվար-հունիս

1	Հեղինակային հանրակրթական ծրագրերի մշակում	2018-2019 ուսումնական տարվա 1-3-րդ, 4-5-րդ, 6-8-րդ, 9-րդ, 10-12-րդ դասարաններում իրականացվող կրթական ծրագրերի 3-րդ ուսումնական շրջանի ուսումնական պլանների, ուսուցման կարգերի լրամշակում: Երկրորդ, երրորդ, չորրորդ շրջանների անհատական պլաններ՝ յուրաքանչյուր սովորողի, մանկավարժական աշխատողի, նախագծեր, աշխատակարգեր, ուսումնական գործունեության արդյունքների գնահատման նախագծեր, գնահատման գործիքների լրամշակում: Ամսվա օրացույց՝ ամփոփ (6) և բացված (6), աշխատանքային օրվա աշխատակարգի հրապարակում (125): Կրթահամալիրի 2019, 2020-2022թթ ստեղծվող-կառուցվող-զարգացվող հրաշալիների՝ հեղինակային կրթական ծրագրի մշակման, կազմակերպման, տարածման ծրագրային, նյութական, մեդիա միջավայրի զարգացման նախագծերի, ենթանախագծերի մշակում: Հեղինակային կրթական ծրագրի սովորողի ուսումնական արդյունքների հանրայնացման, գնահատման համակարգի մշակման ուղղությամբ մեթոդական մշակումներ, հարցադրումներ, աշխատանքային փաթեթ: Ուսումնական նախագծերի մշակում-հրապարակում՝ 2019-ի համար, հունվարի 8-31-ի, մայիսի 27-հունիսի 7-ի նախագծային ուսուցման ճամբարների (14 ճամբար) նախագծեր՝ ըստ ուսումնական շաբաթների, օրերի: Նախագծային ուսուցման ստուգատես-շաբաթներ (3): Հանրակրթական Դիջիթեքի, ձմեռային մարզական, ազգագրական-ծեսի, բնագիտական-տեխնիկական, Թումանյան 150, Կոմիտաս 150, «Կարդում ենք», «Զոն» տեխնոլոգիական, հասարակագիտական, բնապահպանական, քանդակագործության, ճարտարապետության, շրջակա միջավայրի ստուգատեսների, թատերական, երաժշտական, հայրենագիտական, կրթական փոխանակումների, հանրակրթական կամուրջների, այլ նախագծեր և ենթանախագծեր (ավելի քան 500), ամենօրյա առավոտյան պարապմունքի շաբաթական նախագծեր (168), ուրբաթ-համերգի (24), գրական, մշակութային, հանրային, քաղաքական գործիչների, խաղողի և գինու արտադրության կազմակերպիչների, տարբեր ոլորտների մասնագետների հետ հանդիպման, վարպետության պարապմունքների (25), ուսումնական ճամփորդությունների, կրթական փոխանակումների նախագծեր (152), Երևանում ապրիլին և Թբիլիսիում հոկտեմբերին հայ-վրացական համագործակցության 10-ամյակի տոնակատարության նախագծերի մշակում: Քանդակագործության, ճարտարապետության, շրջակա միջավայրի միջազգային առաջին փառատոնի ծրագրի

		աշխատակարգերի մշակըում՝ փառատոնի բովանդակության մեջ ներառելով ամենամյա Հանրակրթական էկոտուրի և «Բանգլադեշյան պլեներ» հունիսյան ստուգատեսների բովանդակությունը՝ արտ-միջավայրի, կինո-ֆոտո, երաժշտական-«Անտիվիրուս Կոմիտաս», թատերական, թարգմանական, ազգագրական նախագծեր: Հեռավար անհատական ուսուցման նախագծեր կրտսեր դպրոցի 5, միջին դպրոցի 3, ավագ դպրոցի 17 սովորողի համար: Հեռավար ուսուցման ծրագրային փաթեթ մեդիագրադարանում: Բաց ուսումնական նախագծերի հանրայնացում: 2-4 տարեկանների, «Իմացումի հրճվանք ծրագրի կրտսերների ամսիկների ամենշաբաթյա նախագծեր (24): 2-5 տարեկանների գործունեության շաբաթական նախագծեր (300): Ուսումնական երկրագործության, այգեգործության գարնանային նախագծերի, նոր ջերմոց-տնկարանի նախագծի մշակում: Կրթական պարտեզում, կրթական հաստատությունների տարածքներում միջավայրի նորացման, բարեկարգման ուսումնական նախագծեր: 2019-2020 ուսումնական տարվա ընդունելության կարգերի, պայմանների մշակում, հայտարարությունների հրապարակում: Սովորողների, մանկավարժական աշխատողների մուտքի ճամբարների նախագծեր (16): «Ուսումնական գարուն», «Ուսումնական ամառ» արձակուրդային նախագծերի փաթեթներ 1-3-րդ, 4-5-րդ, 6-8-րդ, 9-12-րդ դասարանցիների համար: Մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացման նախագծերի մշակում, այդ թվում՝ կրթահամալիրի մանկավարժական աշխատողների պարապմունքների, հեղինակային կրթական բլոգային-նախագծային ուսուցման ծրագրով վերապատրաստումների, մանկավարժական աշխատողների «Մուտք կրթահամալիր» ճամբարի, մանկավարժական գարնանային, հունիսյան բաց ճամբարների, նախադպրոցական հաստատությունների մանկավարժական աշխատողների, գրադարանավարների, դասվարների, երաժշտության, կերպարվեստի տեխնոլոգիայի ուսուցիչների վերապատրաստման նախագծեր (180 պարապմունքի): Բլեյան բաց ցանցին ուղղված՝ «Գյուղական դպրոցը համայնքային զարգացման կենտրոն դարձնելու ուղենիշներ», «Հանրակրթության մանիֆեստ», հեղինակային կրթական ծրագրի ձեռքբերումների ցանցային տարածում՝ «Դպրոց-պարտեզների տարածումը Երևանում և մարզերում կօգնի լուծելու շատ հարցեր», «Գնահատման բաց համակարգ», «Հինգ տարեկանների իմացումի հրճվանք», ««Կրթական պարտեզ բնակելի արվարձանում» նախագիծը՝ քաղաքային ծրագիր»: Հեղինակային կրթական ծրագրի բաց ցանցի առաջարկի լրամշակում, քննարկում ԿԳՆ-ում: Բաց ցանցի բաց լաբորատորիայի, մայիսյան բաց հավաքի ծրագրեր, 52 կլոր սեղանի նախագծերի, նյութերի մշակում: Հեղինակային կրթական ծրագրով ստեղծված կրթահամալիրի՝ հանրային, բաց, ամբողջական ներառական համալիր-դպրոցի տնտեսության ֆինանսական կազմակերպման տեղեկանք, 2019, 2020-2022 թթ զարգացման ծրագրով որոշված հրաշալիների իրագործման մասնակցության առաջարկ, «Կրթական պարտեզ բնակելի արվարձանում» նախագիծը՝ քաղաքային ծրագիր՝

		տեղեկանք ՀՀ վարչապետին, ՀՀ ԿԳՄՍՆ, Երևանի քաղաքապետարան, ՏԿԾԵՆ, ՇՄՆ:
2	Հեղինակային հանրակրթական ծրագրերի կազմակերպման աջակցություն	mskh.am-ի, մեդիագրադարանի, «Սեբաստացի TV»-ի գործունեություն. կայքում հրապարակումներ 8 լեզվով, դպրոցների, քոլեջի 7 ենթակայք, ուսումնական կենտրոնների, մասնախմբերի, լաբորատորիաների 18 բլոգ, կրթահամալիրի տնօրենի, փոխտնօրենների, դպրոցների ղեկավարների (9) բլոգներ: Կրթահամալիրի ցանցի գործունեություն, սերվերի տեխնիկական, ծրագրային նորացում: Մանկավարժական աշխատողների (235), սովորողների (1450) բլոգների գործունեություն: Կրթահամալիրի դպրոցների, քոլեջի հունվարի, հունիսի գործունեություն՝ որպես բաց ճամբարներ նախագծային ջոկատներով, արտագնա նախագծերով. Բլեյան բաց ցանցով կրթական ծրագրի կազմակերպման ներկայացում: Հանրակրթական կամուրջների նախագծերի իրականացում՝ «Հայ-վրացական հանրակրթական կամուրջներ» ծրագրով Վրաստանի Լագոդեխի և Ջավախքի նախագծային խմբերի մասնակցություն կրթահամալիրում ուսումնական ճամբարներին (հունվարին, մայիսին՝ Երևանում, հունիսին՝ Սևանում) (4 խումբ), կրթահամալիրի նախագծային խմբերի մեկշաբաթյա ուսումնական գործունեություն Թբիլիսիի թ. 98 դպրոցում (2), «Վրացերենի օրեր կրթահամալիրում» ամենամյա տոնական նախագիծ Թբիլիսիի թ. 98 դպրոցի, Վրաստանի դեսպանատան մասնակցությամբ, Վրաստանի անկախության տոնակատարությանը կրթահամալիրի ստեղծագործական խմբերի մասնակցություն: Անակլիայի «Ապագայի ճամբարի» մասնակցության նախագծային խմբի ձևավորում, նախագծային պարապմունքներ Փարիզի «Մկնիկներ» ուսումնական կենտրոնի հետ գործընկերություն. կրթահամալիրի դասավանդողի մեկշաբաթյա աշխատանք Փարիզում, կրթահամալիրի նախագծային խմբի պատրաստություն, մասնակցություն Ֆրանսիայում համատեղ ուսումնական «Համբարձում Փարիզում» նախագծին: Երևան-Փարիզ հուլիսյան հայաստանյան արշավախմբային ճամբարի պատրաստություն: Հեռավար աշխատանք Ստամբուլի գործընկեր դպրոցների հետ, ապրիլին Ստամբուլի Բոմոնթի վարժարանի սովորողների, ուսուցիչների, ծնողների խմբի ընդունելություն, հունիսին՝ Ստամբուլի Կենտրոնական վարժարանի: Իզմիրի տիեզերագիտական ճամբարի մասնակցության նախագծային խմբի ձևավորում, նախագծային պարապմունքներ, հանդիպումներ: Հայաստանում Իրանի դեսպանության մշակութային ուսումնական կենտրոնի աջակցությամբ, Մեղրիի պարսկերենի ուսումնական կենտրոնի գործընկերությամբ նախագծային առաջին խմբի այցելություն Իրան՝ Պարսկահայք: Հայ-իտալական կրթական-մշակութային կապերի հաստատում: Ուսումնական երկրագործություն, այգեգործություն, պարտեզապուրակային նախագծեր, հանդիպում-վարպետության պարապմունքներ:

		Կրթական պարտեզում, կրթական հաստատությունների տարածքներում միջավայրի նորացման, բարեկարգման կազմակերպում՝ որպես ուսումնական նախագծեր: Բլեյան բաց ցանցի մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացման պարապմունքների ծրագրեր. կրթահամալիրի մանկավարժական աշխատողների շուրջտարյա դպրոցի 188 պարապմունք, այդ թվում՝ «Լինուքս» ծրագրավորման հիմունքներ, մանկավարժական գարնանային, հունիսյան բաց ճամբարներ, բլոգային-նախագծային ուսուցման ծրագրով վերապատրաստումներ դիմողների համար (6 խումբ, 52 մարդ), «Մուտք կրթահամալիր» ճամբար (21 մասնակից): 2-5 տարեկանների, դաստիարակների, երկարացված օրվա կազմակերպիչների, «Իմացումի հրճվանք» ծրագրի, մայրենիի լաբորատորիաների գործունեություն: Մենթորական բաց լաբորատորիայի գործունեություն: Մանկավարժական ակումբի 6 պարապմունք՝ նվիրված նախագծերով ուսուցմանը, այդ թվում՝ հոգևոր-մշակութային նախագծեր, մանկավարժական աշխատողի անհատական հետազոտական գործունեությանը, մայրենիի ուսուցման և ուսումնական աշխատանքի գնահատման խնդիրներին, հեռավար ուսուցմանը: «Դպիր» մանկավարժական ամսագրի հայերեն 6 համար, անգլերեն (13), ռուսերեն (18), վրացերեն (3) նյութեր տարեկան համարներում:
3	Աջակցություն հեղինակային կրթական ծրագրերի տարածմանը	Բլեյան բաց ցանցով կազմակերպվող ուսումնական նախագծեր՝ «Թումանյան-Կոմիտաս 150» միավորող նախագիծ. նախագծով Գյումրու մանկավարժական երգչախմբի նախաձեռնություն, հունվար-հունիսի գործունեություն կրթահամալիրի մասնագետի աջակցությամբ, Հառիճի վանական համալիրում հոգևոր երգերի ամենամյա փառատոնի կազմակերպում: Համերգ-հեղինակային կրթական ծրագրի ներկայացում Շիրակի մարզում, Գյումրիում, Ազատանում, Հառիճում, Արագածոտնի, Արմավիրի, Կոտայքի մարզերում: Ազգագրական ծեսի ուսումնական նախագիծ՝ Բարեկենդանի, Զատկական համատեղ ծես Շիրակի մարզի Ազատանում: Ուսումնական նախագծեր, այդ թվում՝ ազգագրական, Արագածոտնի Աշտարակի, Սասունիկի, Ոսկեհատի, Բյուրականի մանկապարտեզների, դպրոցների մանկավարժական աշխատողների, սովորողների հետ: «Հեղինակային կրթական ծրագրով Տավուշում» տեղեկանքի ներկայացում ՀՀ Տավուշի մարզպետին, համագործակցության նախագծերի առաջարկ, քանդակագործության, ճարտարապետության, շրջակա միջավայրի փառատոնի ծրագրով համագործակցություն: Հեղինակային բաց ցանցի բաց լաբորատորիա՝ ապրիլյան ստեղծագործական հավաք, մայիսյան ստեղծագործական ամենամյա 14-րդ հավաք: Հավաքի ծրագրերով պարապմունքիներին, շրջայցներին, կլոր սեղաններին մասնակցել են ՀՀ ԿԳ նախարարը, կրթության տեսչական մարմնի ղեկավարը, հանրապետության նախադպրոցական հաստատություններից, դպրոցներից, կրթական ոլորտի ՀԿ-ներից 230 մասնակից: «Բարեկամություն» ճամբարի, վերապատրաստումների կազմակերպում իրենց հայտով՝ ՀՀ մարզերից, Երևանից գրանցված աշխատողների համար Արագածոտնի, Լոռու,

		Կոտայքի, Շիրակի, Տավուշի, Սյունիքի մարզերից նախադպրոցական դաստիարակներ, գրադարանավարներ, հասարակագետ, երաժշտության ուսուցիչ: Կրթական փոխանակումների նախագծեր Արագածոտնի Ոսկեհատի, Վայոց ձորի Արտաբույնքի, Շիրակի մարզի Ազատանի դպրոցների հետ: Ուսումնական ճամփորդությունների թիվը՝ 193, այդ թվում՝ քաղաքային 96, մեկօրյա հայրենագիտական-էկոլոգիական-մշակութային 48, կրթական փոխանակումներ, արտագնա ճամբարներ՝ 39: Կրթահամալիրի սովորողների, ուսուցիչների, խմբերի մասնակցություն կրթահամալիրում, կրթահամալիրից դուրս կազմակերպված ստեղծագործական հավաքների, քաղաքային, հանրապետական, միջազգային ցուցահանդեսների, վերապատրաստումների՝ 34: Կրթահամալիրի աշխատողների, սովորողների հրապարակումները հանրապետական ԶԼՄ-ներում. նրանց մասնակցությամբ հեռուստա-ռադիոհաղորդումներ՝ 31, կրթահամալիրի տնօրենի, աշխատողների, սովորողների բլոգային նյութերի հրապարակում սոցցանցերում, ԶԼՄ-ներում: Կրթահամալիրի զարգացման ծրագրով յոթ հրաշալիների կառուցման-ստեղծման նախագծերի իրականացում, նախագծերի հանրայնացում, քննարկումներ պաշտոնատար անձանց, հանրային գործիչների, շահառուների, աջակիցների հետ:
4	Աջակցություն կրթահամալիրի կանոնադրությամբ որոշված նախադպրոցական հեղինակային կրթական ծրագրի կազմակերպմանը	Կրթահամալիրի 5 նախակրթարանում հուլիսի 1-ի դրությամբ՝ 2-5 տարեկանների 16 խումբ, այդ թվում՝ 2014թ. ծնված սաների 5 խումբ, 396 սան: Դաստիարակի, դաստիարակի օգնականի, երաժշտության դաստիարակի 37 բլոգ, կրթական ծրագրի մշակում-լուսաբանում բլոգներով, սոցցանցի խմբերով: Մասնագիտական զարգացման աշխատանքների նախագծում և լուսաբանում դաստիարակների լաբորատորիայի բլոգում, ծրագրային-մեթոդական նյութերի փաթեթների ստեղծում «Պարտեզ» բլոգում, «Դաստիարակի օրագիր» նախագիծ: Խմբերի գործունեության կազմակերպում ուսումնական օրացույցով, շաբաթական նախագծով, «Ձմեռային պարտեզ» նախագծով 2-5 տարեկանների, նրանց մանկավարժական աշխատողների մասնակցություն ձմեռային մարզական բաց ստուգատեսին: Ընտանեկան նախագծեր՝ «Մարզական մայրիկների ձոն», «Մարզական ընտանիք», «Թումանյանն ընտանիքում», «Դդմագովք», «Աստղափայլ օրորների շնորհանդես նախակրթարանում»: Դդմագովք-դդմածես, տրնդեզ, Բարեկենդան, Զատիկ, Տիկնի պսակ, Համբարձում խմբերում, ընտանիքներում: Ամառային լողափնյա պարտեզը՝ 5 բաց լողափով, մեկնարկել է մայիսի 27-ից, գործում է ողջ ամառը:
5	Աջակցություն կրթահամալիրի կանոնադրությամբ որոշված լրացուցիչ, այդ թվում՝ արտադպրոցական կրթական ծրագրերի կազմակերպմանը	Ամառային լողափնյա (վեց բաց լողափ կրթահամալիրում) ճամբարներ. հունիսի 10-ից՝ 3 փուլ, 15 ջոկատի գործունեություն, 240 մասնակից, այդ թվում՝ քաղաքի, հանրապետության այլ դպրոցների սովորողներ, քաղաքի հյուրեր: Լողափնյա ճամբարների ներառում քանդակագործության, ճարտարապետության, շրջակա միջավայրի միջազգային փառատոնային ճամբարում: Բաց լողափի ձևավորում նաև կրթահամալիրի ուսումնական ագարակում: Լողուսուցում փակ

		լողավազանում. կրթահամալիրի դպրոց-պարտեզների առաջին դասարանի սովորողներն ավարտել են լողի մեկամյա ուսուցման դասընթացը (320 սովորող), անհատական հայտով լողուսուցման լրացուցիչ ծառայություն են ստացել 5-12 տարեկան այլ սովորողներ (ամսական միջին թվով 30), 4-րդ դասարանցիների ստուգման շրջանակում հունիսին գրանցվել են նաև սովորողների լողի ցուցանիշները: Կրթահամալիրի ուսումնական կենտրոնների անընդհատ գործունեություն՝ Արատեսի դպրական կենտրոն. դպրոց բնության գրկում, Մարզական ուսումնական կենտրոն. հնգամարտի դպրոց, Խաղողի և գինու դպրոց, Վիգեն Ավետիսի քանդակի դպրոց, Ուսումնական ագարակ, Երաժշտության և պարի, Շախմատի, «Տիգրան Հայրապետյան» գրադարան, Մանկավարժության կենտրոն: Արատեսի դպրական կենտրոնի բարեկարգման նախագծեր: Արատեսի դպրական կենտրոնում ուսումնական ճամբարների գործունեություն (19), այդ թվում՝ փառատոնային ճամբար: Սևանի «Ժայռ» ճամբարի գործունեություն (6): Սևանի, Արատեսի ճամբարներում ԱԻՆ աջակցությամբ վրանային ճամբարների նորացում-արդիականացում, Գեղարքունիքի, Վայոց ձորի մարզային կառույցների պարապմունքներ: Լրացուցիչ կրթության խմբերի գործունեություն՝ մարզական՝ մարմնամարզություն, սուսերամարտ, վոլեյբոլ, բասկետբոլ, ֆուտբոլ, սեղանի թենիս, կարատե (ամսական միջինը՝ 120 սովորող), շախմատի ուսումնական կենտրոնում (ամսական միջինը՝ 35 սովորող), երաժշտության ուսումնական կենտրոնում՝ դաշնամուր, ջութակ, կիթառ, ֆլեյտա, թավջութակ, ազգային նվագարաններ (ամսական միջինը՝ 82 սովորող), քանդակի-կերպարվեստի կենտրոնում՝ քանդակ, գունանկար, գծանկար (ամսական միջինը՝ 35 սովորող): Երկարացված օրվա ճամբարում 23 ջոկատի (ամսական միջինը՝ 480 սովորող) գործունեություն: Նախագծային գործունեություն խաղողի և գինու դպրոցում՝ խաղողի այգու, մասնագիտացված միջավայրի ստեղծման, գինու տակառների ձեռքբերման-նորոգման ուղղությամբ, գործընկերության հաստատում Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, գինեգործական կազմակերպությունների հետ, խաղողագործ-գինեգործների հետ, նախագծային այցելություն, ուսումնասիրության նախագծեր, տակառների վերանորոգման արհեստանոցի գործունեություն: Ագարակում երկու քուռակի ծնունդ, կենդանիների ամենօրյա խնամքի նախագծեր, ձիավարության, հնգամարտի նախագծեր: Նոր ջերմոց, տնկարան կրթահամալիրի Արևմուտքում, Սարալանջի խաղողի այգեբաց, ամենօրյա խնամք: Քանդակի դպրոցում քանդակի, ոսկերչության նոր արվեստանոցների ձևավորում, կրթահամալիրի խեցեգործական արհեստանոցի ներառում քանդակի դպրոցում: Քանդակի դպրոցի պատրաստություն քանդակագործության, ճարտարապետության, շրջակա միջավայրի փառատոնին:
6	Աջակցություն կրթահամալիրի կանոնադրությամբ որոշված՝ սովորողների, մանկավարժական	Սովորողների ընտրությամբ, լրացուցիչ կրթության խմբերի գործունեություն ուսումնական կենտրոններում: Առարկայական ամենամսյա ֆլեշմոբների կազմակերպում՝ բնագիտության, մայրենիի, օտար լեզուների, մաթեմատիկայի,

	աշխատողների օժտվածության զարգացման բաց համակարգին	շախմատի, հասարակագիտության (45 ֆլեշմոբ, առաջադրանքների 140 փաթեթ): Բանգլադեշյան հունվարյան պլենների, հունիսյան-փառատոնային 6-ական դպրոց-ճամբարի, Արատեսի դպրական կենտրոնում ճամբարների կազմակերպում՝ որպես հունվարյան, հունիսյան ստուգատեսային-փառատոնային նախագծերի հարթակներ: Ուսուցչական գրական ակումբի, «Սեբաստացիներ» ուսուցչական, մանկական երգչախմբերի, վոկալ խմբի, պատանեկան պարերգի «Ակներ», պարի «Կայծեր» խմբերի գործունեություն օրացույցով սահմանված կարգով: Քանդակի մանկավարժական ակումբի գործունեություն, միջազգային փառատոնի նախագծերի աշխատանքներ: Ուսուցչի հեղինակային TV-ներ youtube ցանցում: Հանրակրթական ամենամյա բաց ստուգատեսների կազմակերպում՝ կրթահամալիրի բոլոր սովորողների, ուսուցիչների, կրթական փոխանակումների նախագծերով կրթահամալիրի հյուրերի մասնակցությամբ՝ «Հանրակրթական Դիջիթեք 2019. թվային միջոցները հանրակրթության արդյունավետ գործիքներ» 11-րդ ստուգատես (606 նախագիծ, ավելի քան 1500 մասնակից), բնագիտական-տեխնիկական 5-րդ ստուգատես (203 նախագիծ, ավելի քան 500 մասնակից), ձմեռային մարզական 5-րդ ստուգատես՝ ձմեռային մարզական խաղեր (770 մասնակից), լող, մարմնամարզություն (մոտ 600 սովորող՝ 5-8 տարեկաններ), «Կարդում ենք» ստուգատես՝ տերյական, չարենցյան օրեր, Թումանյան 150, «Մայրենիի օրեր», Մխիթար Սեբաստացու օր (140 նախագիծ, սովորողների անհատական նախագծեր. ավելի քան 1500 մասնակից), «Տիգրան Հայրապետյան 2019» ամենամյա 15-րդ հասարակագիտական-լրագրողական նախագծերի ստուգատես, քաղաքագիտական նոր ակումբ (22, այդ թվում՝ շուրջտարյա «Այլընտրանքային պատմություն», «Բռնադատվածներ», «Հայկական հեղափոխություն», «Տարածաշրջանային քաղաքականություն», միջմշակութային նախագծեր, հանդիպում-քննարկումներ, վարպետության պարապմունքներ, այցելություն ՀՀ իշխանության մարմիններ, կրթահամալիրի խաղարկային դատարանի վերագործարկում, լրագրողական նախագծեր, այդ թվում՝ կրթահամալիրի տնօրենի հետ հանդիպումների շարք, վարպետության 12 պարապմունք. 500 մասնակից), «Ձոն» տեխնոլոգիական ստուգատես (73 նախագիծ, ավելի քան 1500 մասնակից), «Դպրոցը ծեսի արվեստանոց»՝ մկրտության, բարեկենդանի, զատկական, հարսանյաց, համբարձման «Նվերներ», «Միջավայրի տոնական ձևավորում» նախագծերում 1-12-րդ դասարանների սովորողների ներառում, Սուրբ Ծննդյան, Մկրտության, Ղափամայի, Տրնդեզի-Տյառնընդառաջի, Բարեկենդանի, Զատկական, Համբարձման, հարսանեկան ծեսեր (մասնակցություն) դպրոցներում, կրթահամալիրային տոնախմբություններ: Շախմատի դպրոցում ապրիլյան ամենամյա բաց առաջնություն: Քանդակագործության, ճարտարապետության, շրջակա միջավայրի ամենամյա 1-ին փառատոնի նախապատրաստման նախագծեր: «Գետը բնակավայրում» (53), «Իսկական հարսանիք. ժողովրդական օպերա» (14), «Բանգլադեշը 100 սովորողի աչքերով» մասնակցային ճարտարապետության նախագծեր (համակարգող՝ իտալացի ճարտարապետ Ռոբերտո Ռավալի, «Մեկ շաբաթ իտալացի ճարտարապետ Ռոբերտո

		Ռավալիի հետ» մարտ-ապրիլի, հունիս-հուլիսի նախագծեր, ճամբարային նախագծային խմբերի մասնակցություն հունիսյան շաբաթին): Նախագծային ցուցահանդեսներ: Ստուգատեսների հայտերի, նյութերի, արդյունքների հրապարակում ստուգատեսների բլոգներում: Կրթահամալիրի սուսերամարտի հավաքականի մասնակցություն սուսերամարտի հանրապետական հավաքի-մրցաշարի Գյումրիում, Քութահսում, պատանեկան միջազգային առաջնությանը Լեհաստանում: Հայաստանի հավաքականի կազմում կրթահամալիրի մարզչի մասնակցություն նետաձգության աշխարհի գավաթին և աշխարտի առաջնությանը (Թուրքիա, Հոլանդիա), հրաձգության ակումբի սովորողների մասնակցություն Զինաիդա Սիմոնյանի հուշամրցաշարին: Կրթահամալիրի SS լաբորատորիայի սովորողների խմբերի մասնակցություն ռոբոտների համաշխարհային օլիմպիադայի ազգային փուլին, «Տեխնովացիա» հայաստանյան մրցանակաբաշխությանը, Կրթահամալիրային, դպրոցական, դասարանական, խմբային TV-ռադիոների, պատանեկան խմբագրությունների գործունեություն (65): Համերգ տոնախմբություններ Գյումրիում-Ազատանում (3), Էջմիածին-Ամբերդ-Ոսկեհատ-Ոսկեվազում, Բյուրական-Աղձք-Ագարակում, Թումանյանի երևանյան տան բակում, Կոնդում, Չարենցի արձանի մոտ, Չարենցի կամարի տակ, երևանյան զբոսայգիներում, ուսումնական ճամփորդությունների ծրագրերով՝ հանրապետության մարզերի դպրոցներում, գյուղերում: Մեդիաուրբաթ-համերգների կազմակերպում (23), Հարավարևմտյան ֆիլիարմոնիկ ծրագրի համերգների կազմակերպում (3): Ուսումնական ժամերգություն Սուրբ Երրորդությունում (23), Սուրբ Աննայում, Արատեսում, Նորավանքում, ուսումնական ճամփորդությունների ծրագրերով՝ գործող և խոնարհված եկեղեցիներում: Ծեսերի լաբորատորիայի ստեղծում, գործունեություն:

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՏՆՕՐԵՆ՝ ***Ա. ԲԼԵՅԱՆ***

ԾՐԱԳՐԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ***Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ***